2021 – 2022 ուստարի

Դասղեկի տարեկան հաշվետվություն

2021 – 2022 ուստարում ստանձնել եմ V ^{Գ} դասարանի դասղեկությունը:

Օգոստոսի 29 – ին կատարվել է դասագրքերի բաշխումը: Ծանոթացել եմ աշակերտների անձնական տվյալներին:

Սեպտեմբերի 1 – ին դասասենյակը պատրաստ է եղել աշակերտներին ընդունելու: Դասարանում առաջին հերթում սովորել են I^{Գ} դասարանցիները:

Դասարանում տարվա սկզբում եղել են 26 աշակերտ՝ 14 տղա, 12 աղջիկ, ուսումնական տարվա վերջում մնացել է անփոփոխ:

Դասարանում փակցվել է դասացուցակը և հերթապահության ցուցակը: Դասղեկի ժամերին հաճախ ենք անդրադարձել մաքրության, հանդուրժողականության, կրթության և ընկերասիրության թեմաներին:

Դասարանում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2 աշակերտ, նաև և՛ դաստիարակության, և՛ վարքային դժվարություններ ունեցող աշակերտներ: Սեպտեմբերին արդեն գրվել էր ԿԱՊԿՈՒ- ի աշակերտների ԱՈՒՊ –ները:

Ուսումնական տարվա ընթացքում տեղի է ունեցել 4 ծնողական ժողով՝ օրակարգի հիմնականում ուսման, հիգիենային, վարքին և կազմակերպչական խնդիրներին վերաբերող 4 – 5 հարցերով: Կազմվել են ծնողական ժողովների արձանագրություն-ները:

Առաջին կիսամյակը ամփոփվել է, տեղեկացվել են ուսումնական գործընթա-ցում դժվարություններ ունեցող աշակերտները, զրուցել հետները, փորձել օգնել և ուղղորդել ուսումնական գործընթացի դժվարությունները հաղթահարելու համար:

Դասարանում սովորում են դժվար դաստիարակվող, հոգատարության կարիք ունեցող, ինչպես նաև շնորհալի երեխաներ, ովքեր նշանակալի ձեռքբերումներ ունեն նաև այդ ոլորտներում:

Հետևել եմ հաճախումներին և համարյա միշտ տեղյակ եմ եղել բացակայության պատճառներին: Դասարանում առկա ոչ այնքան առողջ մթնոլորտը, ինչի հետևանքն էլ դառնում են անկարգություններն ու վիրավորանքները, փորձել եմ հարթել հնարավորության դեպքում իմ մշտական ներկայությամբ՝ բացատրելով, ներելով, անհրաժեշտության դեպքում սաստելով: Աշխատել եմ փոխտնօրենի, հատուկ ման-կավարժի, ուսուցչի օգնականի հետ: Զրուցել եմ թե՛ ծնողի և թե՛ աշակերտի հետ:

Դասարանի աշակերտները մասնակցել են մաթեմատիկայի օլիմպիադայի դպրոցական փուլին, <<Մեղու>>, <<Կենգուրու>> հանրապետական մրցույթներին:

Ապրիլի 28 – ին կազմակերպել ենք ուսումնադաստիարակչական էքսկուրսիա Մ. Մաշտոցի անվան Մատենադարան և Հովհ. Թումանյանի տուն – թանգարան:

Դասղեկի ժամերին կազմակերպել ենք զեկուցումներ, զրույց- քննարկումներ անկախության, հայրենիքի, բանակի, մայրության ու գեղեցկության, հիշատակման օրվա թեմաներով:

II կիսամյակը և ուսումնական տարին ամփոփել ենք 100 տոկոս առաջադիմությամբ: Ունեցել ենք 120 և ավել դասաժամ բացակայություն ունեցող 2 աշակերտ, ովքեր հանձնել են վերաքննություն:

Ուսումնական վերջին շաբաթը հավաքել ենք դասագրքերը:

Հունիսի 17 – ին կազմակերպել ենք ամառային ամփոփիչ էքսկուրսա:

Ունեցել եմ բացթողում. չեմ կազմակերպել դասարանական միջոցառում, ինչը կլրացնեմ գալիք ուսումնական տարում:

Դասարանն ունի հեռանկար, եթե մեր աշխատանքը ցանկալի ընթացք ունենա:

Դասղեկ՝ Ն. Առաքելյան

20. 06. 2022 թ.